



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 31

✻ ՀԱՐԱՐ ✻

29 ՄԱՐՏ 1908

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԵՄԻՆՈՐՈՐԻ

ԶԵՆԻԹ

ԱՐԱՋՆԱԿԱՐԳ ԵՄԻՆՈՐՈՐԻ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԿ.


Պաշեն-Գաբու, Օռոգաի-Պաք հաստատութեան դէմ, թիւ 16

Հատոր 40 փարա

(Բ. Ասադորյան) شرکت صنیعہ مطبعہ سی — باب طای جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հաստատութիւն թիւ 52




ሀ ተ ኄ ነ ኑ ቡ

ՀԱՅԲԱՅԹԻՁ ԿԱՅԾ. ՊԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսագոյն է. սոյն մեքենան մինչեւ կատարելագործութեւ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ այլորէի յնաւն կը ընէ:

Տեղ՝ ամեն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերություն Վասառապատեց մէջ :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴՊԼՈՄԱՏ

ԲԵՐԾ

1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին .

4th floor

1. Սեփեհի Ե. Յուսէփի Լիսէին դէմ.

ကုမ္ပဏီ

2. Գարաքէօյ, Թրապլէյի կայսրանին գէմ.

ԱԿՒՒՏԱՐ

(2. Սուլթան Պէյազիւ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13.
Զարը Պոյս, Թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտեր գաւառներու քոյր քաղաքներու մէջ:

Սխնկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ՝ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ օրս.

ԹԵՐԹ՝ ազգային, գրական եւ ֆալսափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 ղրշ. վեցամսեայ 45 ղրշ. գա-
ւառներու համար տարեկան 108 ղրշ. վեց-
ամսեայ 60 ղրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. **Զեռքէ**
վաճառում՝ ասոր փառա: **ԱՐԵՒԻՆԼԹ**
հրա լարակ կ'իլէ ամէն օր, կէս օրին, խը-
նասեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
երով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
հիւններով :

ԴԻԻԵԼՔ, իր վերակազմուած խում-
ամբ և իր կարող աշխատակիցներ-

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իբր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ԸԱԿԱՐ Կանգամանքը, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Մասնօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսա-
րաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական, յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՎԵԼԻՔԻ վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագիրն չպէտք է ուղղել Տէր Է
Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խմբ-
ագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 31

ՇԱՐԱԹ

29 ՄԱՐՏ 1908

ՄԵՐ ԶԱՒԵՇՏԱԹԵՐԹԸ

Հանրագիտակի Տնօրէն-Խմբագրապետ հայ-
րենակից բարեկամս փափաք կը զգայ որ իմ
խօնարն կարծիքս յայտնեմ իր Շարաթաթեր-
թին վրայօք. կուզէ որ խօսիմ անոր ուղ-
ղութեան վրայ, պարունակութեան վրայ,
օգտակարութեան աստիճանին վրայ, լեզուին
վրայ և նոյն իսկ աշխատակիցներուն վրայ:

Դովաւա՞նք կը սպասէ արդեօք. — Չեմ
կարծեր: Դիտէ՛ որ իր թերթին ու գրիչին
նկատմամբ եթէ հարիւր աստիճան զրուա-
տիք պէտք ըլլայ հիւսել, ի՛ր իսկ թերթին
մէջ ու իմ գրիչիս տակ չպէտք է իր բոլոր
բովանդակութեամբը երեւայ: Իր Խմբագ-
րապետի համեստութիւնը չպիտի ներէր այդ
բանը: Եւ յետոյ, ըսի՛ թէ բարեկամ ենք,
հետեւաբար բացարձակ ու միապաղաղ ոճով
մը հաւանութեան ու ներքողանքի պսակ մը
բազմաթիւ իր երիտասարդ ճակտին՝ քիչ մը
compromettant պարագայ կ'ըլլար: Չեմ ու-
զեր այդ վիճակին ենթարկել զինքն ու են-

թարկուիլ ե՛ս՝ ալ՝ իմ այնքան մեղադրուած
անկեղծութեամբս որ համակրանքներ չէ որ
կը ձնցնէ բոլորտիքս, մտերմական որքան հը-
րապարակագրական չըջանակներու մէջ:

Սկսի՛նք ուրեմն:

Մեր ընթերցող հասարակութեան այն մասը
որ գրական նուրբ երգիծանքի ճաշակն առած
է, որ զուարթախոհ ու կատակալից գրուած ք-
ներէ՛ միայն կ'ախորժի՝ հարկա՛ւ քիչ մը
դժուարահաճ կը վերաբերուի դէպի Հանրա-
գիտակը: Այս դասակարգին բերնի ծածուկն է
ամէն առթիւ կրկնել թէ Պարոնեան դեռ
չունեցաւ իր արժանաւոր յաջորդը:

Բայց բոլորովին ճշմարիտ է այս դիտո-
ղութիւնը. — կարծեմ թէ ոչ:

Այսօր Ալփիար մը ունինք որ իր սեռին
մէջ պիտի կրնար չափուիլ Պարոնեանին հետ,
սա տարբերութեամբ որ Պարոնեան՝ հին հել-
լեն երգիծանքէն կ'առնէր իր հիւթն ու ճա-
րակը, զոր կը պատուաստէր մեր բարձրուն

վրայ՝ կատարելապէս յաջող էջեր արտադրելով որոնք անմահացուցին զինքը ... յետ մահու, bien entendu :

Արիիար՝ նոյն շաւիղը կը հետապնդէ ոչ նուազ յաջողակութեամբ, բայց իր խորհելու և արտայայտելու ոճը ժամանակակից եւրոպական երգիծանքն է՝ մասնաւորապէս ֆրանսականն ու անգղիականը։ Չինքը դատելով այն էջերէն, ուր հայ ընտանեկան կեանքն ու մեր միջավայրը կը պատկերացնէ, նուազ նկարուն, նուազ ճարտար ու զուարթախոհ չէ, և նոյն իսկ աւելի՛ ալ բան մը ունի, որ ի՛րն է, իր աննախընթաց սեփականութիւնը։ Գռեհիկ էջեր չեմ կարդացած իրմէ, որքան ալ բոնցօրաւի համբաւ մը վաղեցուցած ըլլան իր գրական տաղանդին։

Ասոր անմիջապէս յաջորդ կը ներկայանայ՝ թեթեւ, զուարթ ուստոստուն ոճով կալօքը։

Չինքը չգովե՛նք, կ'ելլայ երե՛ս կ'առնէ, բայց մեր այժմու գրողներուն մէջ այնքան դիւրութեամբ կը շարժէ իր շուտիկ գրիչը որ, տառնց ուրիշին տեղը գրաւելու, ինք իրեն յատուկ ու եզակի ատիւ մը արդէն տեղաւորեց լրագրութեան մէջ. ո՛ր եւ է ցամաք նիւթ, խայթմանուչ հիւթ մը կը ստանայ և՛ եթէ շատ գրելու, empaillage ընելու չստիպուի, ապահովապէս անկապտելի դափնեպսակ մը իրեն բաժին պիտի մնայ։

Ու վահան փափաղեան ինքն ալ շաբաթական իր գրութեանքներուն մէջ անս'նկ գիւտեր ունի որ մտացիութեան դրոշմէ զուրկ չեն և մասնաւոր դասակարգի մը համար հաճելի ընթերցումի մը նիւթ կը հայթայթեն։ Ըսողներ կան թէ իրօք մասնաւոր դասակարգ մը կայ որ իր գրիչէն շատ կ'ախորժի, այն դասակարգը որ բարձր ու խնամալ գրականութեան մը յատուկ humeurէն տարբեր ճաշակով մը օժտուած է։ Ի՛նք ալ շատ արտադրելու ստիպուած՝ յաճախ կ'անոնսէ նըրբութիւնը և զինքը գնահատող դասակարգին ճաշակին գոհացում տալու հոսանքէն կը մղուի՝ ի մնաս իր զաւեշտագրի տաղանդին։

Ասոնցմէ զուրս երգիծանքի բաժինը լեցընողները թերթին accessoireը սեպելով՝ բարենիչ մը կը պատշաճեցնենք մեր բարեկամին որ իր թերթին մէջ տեղ կուտայ վերոյիշեալներէն մէկուն թէ միւսին, և Հանրագի-

տակէն ու Իգմիրի շաբաթաթերթէն (Արեւելեան Մամուլէն) դատ չկայ հրատարակութիւն մը ուր երգիծական ճիւղը տեւականապէս նիւթ ունենայ մշակելու։

Հանրագիտակին կը պակսի — միշտ իմ խոնարհ կարծիքով — Զուարճալիքի սեռը որ ժամանակին կը մշակուէր մասնաւոր խնամով, և որ բարքերու, սրախօսութեանց, բառախաղերու հաճելի դրուագներ էին՝ կարճ, հատու, թնցող ձեւի մը տակ որ իր ներկայացուցիչը չունի այսօր։

Երգիծական թերթի մը նպատակը կոչու ծաղրածութիւնն է, կոչու կոչու խնդացնելնին։ Այսպէս մտածողներ, կարծեմ, կը շփոթեն երգիծանքը զաւեշտին հետ, կատակը խեղկատակութեան հետ, արծաթը կապարին հետ։ Ասոնց ամէնքն ալ, սակայն, իրենց յատուկ տեղը ունին զաւեշտագրութեան մէջ, ոչ մէկը արհամարհելի ըլլալով հանդերձ մէկը միւսին տեղ չի կրնար բռնել։ Երգիծանքը՝ բարձրաքաղ ծիծաղ չի բերեր, թեթեւ ժպիտ մը կը գծէ շուրթերու վրայ, բայց միտքին մէջ լայն հետք մը հիացումի ցնցում մը առաջ կը բերէ։ Լուսահոգի Պարոնեան իր մըտերմիկ խօսակցութեանց մէջ, իր հանճարեղ սրախօսութիւնները թաւալած ատեն երբեք չի խնդար եղեր։ Նոյն նաեւ թրեանց և ուրիշներ։ (Բայց չչեղինք մեր նիւթէն)։

Դալով լեզուին, բարեկամս ինքն ալ արդէն կը խոստովանի որ, եթէ ոճը կարեւոր է գրութեան մը համար, ոչ նուազ կարեւոր է նաեւ լեզուի խնամքը որ հեւքով վաղքի մը մէջ կ'անտեսուի որքան օրաթերթերու նոյնքան ալ Շաբաթաթերթիս մէջ։ Ես պիտի փափաքէի որ մասնաւոր հոգ տանի այս կէտին և եթէ ռամկական կամ ժողովրդական նիւթերու համար հարկ ըլլայ պահել նոյն իսկ սխալ ուղղագրութիւն մը՝ յարակից անձը շտուկութիւններով, ասոնց համար ալ մասնաւոր խնամք հարկաւոր է։ Ինչպէս զուտ գրական մասերուն համար անհրաժեշտ է լեզուական ճշգրտութիւն ու կանոնաւորութիւն։

Ահա, սիրելի վահան էֆէնտի, անկեղծօրէն ըսի ինչ որ կը մտածեմ. եթէ դատողութեան մէջ կը սխալիմ, պատասխանատուութիւնը ինձի՛ թողէք ... (*) :

ՄՍԲԱՏ ԴԱԹԵԱՆ

(*) Մեր կարծիքը իբր պատասխան յարգելի յօդուածագրին գալ թիւով։ Ծ. Խ.

ԲԵՐԱՑԻ ԿԻՆԸ

[ՖԱՆԹԵԶԻ]

Պոլսոյ Բարիգուհիները:

Բայց այնքան բարիգուհի որքան Մեթաքսաի քօնեաքները՝ քօնեաք. դուրսէն կրնաք խաբուիլ, բայց մէջը նայելու չի գար. չի կարծուի սակայն թէ՝ Բերացի կինը ներսին խնամք չի տանիր որքան դուրսին. ընդհակառակը, Բերացի կինը, երբ հագուելու կելլէ՝ ճերմակեղէններու մեծ հոգ կը տանի, իրեն անանկ կուգայ որ փողոցին մէջ անպատճառ պիտի ինայ, գլուխը վար և ոտքերը վեր:

Կրնայ մաքուր աշխարհաբար գիտնալ, բայց դիտմամբ գէշ կը խօսի տիրացուական չգիտեմ ինչ մը չունենալու համար և կը սիրէ մտա մը պակաս աշխարհաբար գիտնալ՝ Գաւը-գիւղի կիներէն մտա մը վեր ըլլալու համար:

Ամէն իրիկուն, օդը բաց եղած ատեն, Թագաւորմէն մինչեւ Պօն Մարշէ կը քալէ և իրիկունը ուշ տուն կը վերադառնայ իր պարտականութիւնները անթերի կատարողի մը գոհացումով:

Իրեն համար աշխարհք Մատամ Պէկէի խանութէն կը սկսի և Լիւքսէմպուրկի ապագիւններուն առջեւ կը վերջանայ:

Եիւքսէք-գալտըրըմէն երբէք չանցնիր՝ Իւսկիւտարցի չի կարծուելու համար:

Բերայի մէջ կան կիներ որ զաւակի մը ինչպէս ծիծ տալու է չեն գիտեր, բայց հատ մը չէք դտներ՝ որուն անձանօթ ըլլան Ֆուլ հեհնը, Ֆլօշը, ապաքաժը, մեծագոյն գոսսաններուն անունը և Բօնքօրտիայի վերջին երգը:

Բերայի մէջ վխտացող անպարկեշտ կիներէն զանազանուելու համար, փողոցին մէջ անանկ մը կը քալեն որ պարկեշտը՝ անպարկեշտին հետ չփոթել կը փորձուիս:

Տուններուն մէջ բանիբուն, բայց փողոցն են օրն ի բուն:

Ամերիկացիներուն պէս, մեր պառկած ատենը կարթննան և vis-versa:

Ճրանսերէն մը կը խօսին զոր միայն խառութպանները կը հասկնան:

Տասնըչորս տարու աղջիկ մը 30 տարու կնկան մը հովերը ունի և քառասուն տարեկան կին մը տասնըութ տարու աղջկան:

Ուղած ատեննին կը պառաւնան:

Կը ծխեն, կը խաղան, կը ճաճորդեն, կը ֆլիրթեն, էրիկնուն հետ ամիսներով քէն կը պահեն, բամբասանքէ չեն վախնար, այսուհանգերձ աւելի դիւրին է երեսուն կին խաբել Խասգեղի կամ Մաքրի-գիւղի մէջ քան մէկ հատ՝ ի Բերա:

Եթէ վերցունես Բերայէն՝ Բըթի-Շանը, Պօն-Մարշէն, Թէմիսթոկլին, Հաճօրուօ խանը, Մատամ Պէկէն, Բիկմալիոնը, Սըլամտիտը և Մկրեան Տէր Հայրը, Բերացի կինը պիտի խամբէր ջուր չի տեսնող ծաղիկի մը պէս:

Աղօթագիրքերու մեծագոյն մասը Բերա կսպառի, ուր սակայն ամենէն նուաղը կաղօթեն:

Մկրեանին ծուխը ըլլալը մարգուս շիբէ կաւեյցունէ, անանկ չէ՝ Տիկին:

ԳԱՏԸ-ԳԵՂՅՈՒՂԻՆ

Գատըգեղցուհիները իրենք զիրենք Պոլսոյ ամենէն աղնուական կիները կը նկատեն, et il y a de quoi:

Իրենց գիւղին մէջ պաեազի բան չկայ:

Շոգենաւին մախսուս է, պտրտելիք աեղերնին Մօտա, եկեղեցիին Ս. Թագուր, խաթիֆի քաղինօ ունին, մենծ էֆէնտիները և մանիֆաքուրաճիութեան մենծ աղաները հոն կը բնակին, Քաղկեդօնի ժողովքը երբեմն հոն գումարուած է, և իրենց գիւղը քի պիտի ունենայ Իզմիրի պէս:

Բամբասանքնին անգամ elie նիւթերու վրայ կը սահի, այսօր Լանկին մազերը կը քաշքշեն և վաղը ֆուրլանին հասակը:

Բերացիներուն նմանելու համար ցերեկը Բօքէր կը խաղան ... Ֆասուլեայով:

Երեկոյեան դէմ ժամ կերթան ճիւղ այն միջոցին որ 10¹ ին չոգենաւը նաւամատոյց կը համրի:

Շատ մաքուր են իրենց հագուստին, տուներուն և աշխարհաբարին մէջ:

Վերջին նորաձեւութեանց համեմատ կը հագուին և կը հետաքրքրուին քոնսօլիտին բիացայով:

Գատը-գեղցի կինը պարկեշտ կըլլայ, որովհետեւ գրացի կեսարացի է, իսկ կեսարացի կինը որ Գատը-գիւղ կը բնակի, պարկեշտ կը մնայ նոյն իսկ զգացումներուն մէջ չուայլութիւն չընելու համար:

Ամէն տունի մէջ դաշնակ կայ, բայց քիչերու մէջ դաշնակութիւն:

Գատը-գեղցի կինը ամէն բան supporter կընայ ընել, բացի ի կեսուրէ մը:

Ուրիշ տեղ երիտասարդ մը — գործս չտկեմ նէ պիտի ամուսնանամ, կըսէ, իսկ Գատը-գիւղ — մայրս մեռնի նէ:

Գատը-գիւղցի ազջիկը՝ երբէք Պոլսէն էրիկ չսպասեր:

Գատը-գեղցի կինը ինքզինքը շատ աւելի ազնուական պիտի սեպէր եթէ Աստուած այնքան սերտ կերպով կապած չըլլար Գատը-գիւղը... Իսկիւտարին:

6. Մ.Լ.ՓԻԱՐ



Մ Ս Հ

ՆՇԱՆ ԷՖԷՆՏԻ ԳԱՐՈՒՃԵԱՆԻ

Հանգուցեալն որ առեւտրական հրապարակին վրայ, եւ բազմազգի յանախորդաց հանդէպ, միշտ ունեցած է, իր բոլոր բազմակողմանի տուեւառական գործունեութեանց մէջ, փնտռուած պարսնամանչ, ուղ-

ղամիս, նեղապահ ու անբասիր վարձ ու բարձ. ի՞նչ մահուամբն արդարեւ ամեն զինք հանցողաց համար ալ կ'ընդունէ զգալի պարապ մը, յաւեհ ողբալի կորուստ մը, ինչպէս եւ իր մօտաւոր քե հեռաւոր բոլոր ազգակամաց եւ բարեկամաց միտքաբանք, վշտակաւ մաղթելու պարսնակամութիւն մը ամենուս կողմանէ:

Յոյժ ողբացեալ Գաբունեան Նշան Էֆեն-սիին յուղարկաւորութեան իտալացի հանդէսը, մերազգի քե սարազգի սուլաւախումբ ու պատուաբեր բազմոյթի մը ներկայութեամբ ու պարս ու պաշտան վայելութեամբ մը, Գուն-Գաբունի Հայոց Պատրիարքական Մայր-եկեղեցւոյն մէջ կատարուելէ, եւ Հանգուցելոյն կեանքին բազմանիւղ գործունեութեան հանրագոյն զիծերն, ինչպէս ինչպար Ամուսնոյ, ինչպար Հօր մը, կենցաղագիտ եւ բարեկիրք Անհաւի մը առաւելութիւնները ի վեր հանող դաւբանականով ալ պատուելի վերջ, պարսակազարդ դազադը, շեղ մեղեդակառով մը, Երգապատգան պատկանելի սգակիրներու կրօնական քե աշխարհական քափօրովն հանդերձ, փոխադրուեցաւ իր ընտանի գերդասանին յատուկ մեղեդաքաղն ի Պալլադը:

Հանգուցելոյն բոլոր ընտանի պարագաներուն՝ մեր վշտակցութիւնն ու միտքաբանական մտաւորական:

Հանգուցելոյն երեք որդին՝ որ իր երկու կրտսեր եղբարց հետ առեւտրական հրապարակին վրայ ծանօթ է պարկեշտ, անխնոյ ու տենդոս գործունեութեամբ, աշխատակցած է, մասնաւորապէս քերթիս իր զուարթելով ու սրամիտ գրածներովը, ինչպէս այլեւայլ քերթերու ու հանդէսներու իր առեւտրական ու վիպական յողովածներով. երիտասարդ Հեղինակն է նաեւ նոր հրատարակուած ԵՐԿՈՒ ՄԻՏԵՐ գեղեցիկ եւ գոյհով վեպին՝ որուն Առաջաբանը գրած է մասնաւորապէս քերթիս արեւադարձ այլ իր գրական բոցավառ աշխատուն ու խանդուն ընդ միշտ երիտասարդ Արտօնաշէրք, հոխ, ծաղկաւեհ ու երկնեանգնով մը՝ Տիար Արմեն Լուսինեան:

ԽՄԲ.

ԿԱՎՈՐՈՇԱՊԱՏՈՒՄ

ՓԱՓԿՈՒԹԻՒՆ

Կը վստահեցնեմ ձեզի թէ՛ այս բառը հայերէն չէ՛:

Զուլուերէն է, Զատիկերէն է, Զանգիպարերէն է, Զնդերէն է, ամէ՛ն ինչ է, բայց, հայերէն չէ՛ երբէք:

Ինչպէս «վակօն», «թրամուէյ», «թիւնէլ» բառերը հայերէն չեն, նոյնպէս փափկութիւն բառն ալ մեր լեզուին չի պատկանիր:

Միթէ՛ մեր սրբազան նախնեաց ժամանակը վակօն, թիւնէլ, թրամուէյ և փափկութիւն բառերը գոյութիւն ունէին:

Նորահար բառ մըն է փափկութիւնը, որ մեր լեզուին մէջ չկայ, ո՛չ ալ մեր մէջ:

«Կոշտութիւն» բառը հայերէն է, որովհետեւ կը թուի թէ մեր յարգելի նախնեաց ժամանակը կոշտութիւն կայ հղեր անշուշտ, բայց «փափկութիւն»ը հայերէն չէ, այլ լոկ օտարոտի:

×

Այս ըսածիս կարկառուն ապացոյցը տրուեցաւ անցած կիրակի՝ Բերայի ժամը, ուր եկեղեցական մը փափկութիւնը ունեցեր է տղու մը ականջը փրցնելու և տեղէն հանելու:

— Հայր սուրբ, ըսեր են անոր, մի՛ դըպչիր, ականջը տեղէն կը հանես կո՛ր:

Բայց Հայր սուրբը ականջ չէ կախեր և տղուն ակա՛նջը հանաւ է տեղէն՝ փափկութեան օրինակ մը տալու համար համայն աշխարհի:

Մեր Տիրոջ Յիսուսի աստիճան ալ ասանկ բան մը պատահած է:

Պետրոս առաքեալ՝ սրտնեղած մէկ վայրկեանին՝ կտրեր հաներ է տեղէն ականջը մէկու մը, որ իր ջիղերուն կը դպչէր:

Բայց ասիկա 2000 տարի առաջ տեղի կ'ունենար, և Պետրոս առաքեալի ետին կեցած էր Յիսուս՝ որ ականջը հանուած մարդուն մօտենալով՝ իր տեղը փակցուց կրտուած ականջը, Պետրոս առաքեալը սառտելէ վերջը:

Բայց, դժբաղդաբար, կիրակի օրը Բերայի ժամը ներկայ չէր Յիսուս, որով չկըրցաւ փակցնել այն ականջը՝ զոր փրցուցած էր իր պաշտօնեաներէն մէկը:

Հիմա կրնանք ըսել թէ «փափկութիւն» բառը հայերէն է:

Եթէ հայերէն եղած ըլլար, անշուշտ հեռուէն կամ մօտէն իմացած պիտի ըլլար Հայր սուրբը և անոր ականջը չպիտի փրցնէր:

Բայց մարդը միայն ... կոշտութիւն բառը գիտէր, իբր հայերէն բառ:

×

Ուրիշ օրինակ մը ... փափկութեան:

Կիրակի օր, Օհաննէս Յակոբեանի յուզարկաւորութեանը:

Հանգուցեալին տունին դռնապանը, դաւառացի պարզուկ ու բարի մարդուկ մը շալվարով, եկեղեցիին է՛ն առաջը անցած կը հեծկլտայ իր հանգուցեալ «էֆէնտի»ին վրայ:

Բայց, խեղճը անգիտակցաբար, անանկ տեղ մը կեցած է որ յատկացուած է ջոջ հըրաւրեալներու. — չալվարաւոր մարդու տեղը չէ այդ, այլ՝ բրտէնկութաւոր մարդոց:

Բարապան մը — փայտ-պլըլըխ բարապան մը — կը տեսնէ այս բանը և իր բարապանային արժանապատուութիւնը կը գայթակղի:

— Ինչպէս, կ'ըսէ, այս չալվարով մարդը համարձակութիւնը ունեցեր է կենալու ոչ սովորական մահկանացուներու յատկացուած տեղ մը, չո՛ւտ, սըւիկա վա՛նտնիք:

Ու կը մօտենայ դաւառացի դռնապանին, որ կը շարունակէր արտասուել անձայն:

— Հէ՛յ, կ'ըսէ՝ զայն հրմշտկելով կոպտօրէն, ասիկա քու տեղդ չէ՛, ներս քաշուէ՛, չնորհքով մարդոց տեղն է այս:

Պարզուկ դռնապանը չի հասկնար այս լեզուն՝ ա՛յնչափ յուզուած է որ: Բարապանը կը շարունակէ հրմշտկել զայն:

— Իմ էֆէնտի՛ս է, կը պատասխանէ դռնապանը արցունքոտ աչքերով, ես հոս պի-

տի կենամ, իմ էֆէնտի'ս է, ի՞նչ կուզէ՛ք ինէ ... ձգեցէ՛ք որ հոս կենամ:

Բայց բարապանը անանկ բան չի՛ հասկնար և զօռով կը հանէ իր տեղէն խեղճ մարդը, որ իր էֆէնտիին մահուանը վրայ կուլար արտասուածիւր, տեղ բանալու համար անտարբերներու, որոնց հոգը անգամ չէր այս մահը:

Ահա՛ մանրավէպ մը, զոր կրնաք զետեղել ... փափկութիւնք եւ կոշտութիւնք Հայ բարապանաց անուն գիրքին մէջ:

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Քիթէն ինկողը տանըհինգ կտոր կ'ըլլայ: Մտաւորական կեանքի առաքեալ՝ սկզբունքն է բանի մը չհաւնիլ, որպէս զի միայն իրեն հաւնին թերեւս:

Մանուկներու դաստիարակութեան վարդապետ, կը սիրէ ըսել. — «Ձգեցէ՛ք որ մանուկները ինծի գան»:

Արգահատական նայուածք մը ունի՛ ուղղութեամբ մարդկութեան հասցէին, կարծես ուղեւոր ըսել անոր.

— Խըմպըլնե՛ր, ի՞նչ կ'ապրիք կոր, երբ սէնպօլիսթ չէք:

Դառնացած ժպիտ մը չըթուենք Վերեւ, — Մոլիէրին ժպիտը — որ զոյգ մը ակօսներ փորել տուած է քիթին երկու կողմը, մանուկ հասակէն:

Այս ժպիտը որ կեանքի հեգնանքը կը պարունակէ իր մէջ, կարծես կ'ըսէ.

— Պօ՛ւ մարդեր, պօ՛ւ մարդեր, պօ՛ւ մարդեր ...:

Կեանքին մէջ երբեք փորի ցաւ մը իսկ չէ եղած, բայց երբ քերթէ, կը սիրէ երգել.

Օ՛հ, հիւանդ եմ հիւանդ ...

Մեծարենցի գլխաւորն նախագահը և Գում-գարուի գրական ակումբին ներկայացուցիչը: Գում-գարու կը պարծենայ Յակոբ Տէր-Յակոբեանով:

Երբեմն խաթիւ համար կը խնդայ, բայց ա՛յնպէս մը կը խնդայ, որ իր խնդուքը լաց մըն է կարծես:

Անա՛նկ յօդուածներ կը գրէ, ուրկէ չուկացին «պան» մը չի հասկնար թէեւ, բայց տակաւ աւելի կը համոզուի թէ այդ տղան մեծ մարդ մըն է:

Չհասկցուած յօդուածներ գրելու առաքինութիւնը ա՛յս է ահա:

Առանց բաղնեպան ըլլալու, մարդ լուալու եղանակը այնպէս խորունկ գիտէ, որ շատ անգամ աղտոտ մարդիկը իրեն կը դըրկեմ՝ լուացուելու համար, մանաւանդ որ իր բաղնիքը ձրի է:

Անգամ մը Տօմինօն լուացուած է անա՛նկ մը որ ա՛յլ ամբողջ կեանքին մէջ բաղնիք երթալ պէտք չունի յարգելի ֆանթազիստը:

Ձէքի մը չափ սուղ է իր մտերմութիւնը, — դիտմամբ չի մտերմանար ամէն մարդու հետ, որպէս զի պէտք եղած ատենը աղէկ մը՝ լուայ:

Ձի յօժարիւր բերանը բանալ ա՛յնչափ դիւրաւ, որպէս զի մարգարիտները չթափին:

Բըտէնկօթին երդուեալ թշնամին երդուեցած է ժագէթ հագնիլ այն օրը, ուր պիտի կարգուի իր Տիւլսինէին հետ՝ զոր երբեք գտնուելիք չունի:

Առաջ չարտադրեք ասոր անոր պէս, որպէս զի առաջ չգայ իր անունին:

Իր բարեւը ոսկի է. — ահա՛ թէ ինչո՛ւ փոխ չի տար դիւրաւ:

Նոր գրականութեան ռահվիրաներէն մէկը՝ Քասիմին աչքին լոյսն է և Գոլանճեանին գիշերային ուրուականը:

Ապագան. — Խմբագրապետ, վարժապետ, այլ ո՛չ երբեք ... միլիոնատէր կամ թաղական:

Եթէ վիճակահանութեան առաջին պարգեւը չահի, Մեծարենցին համար կ'օթող մը պիտի տնկէ և անոր գրածները ամէն լեզուի մէջ պիտի տպել տայ:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

Է՛Ն ԿԱՐԵԻՈՐ

Այո՛ է՛ն կարեւոր է մեզ համար մեր բարեկենդանի բացառիկ շօշուօթի ուրկէ հատ մը չունինք: Խօսք չէ, ուէքլամ չէ, ուշտուրմասիօն հիչ: Կը խնդրենք, կաղաչենք, կը պաղատինք մեր այն բաժանորդներէն կամ ձեռքէ զնողներէն, որոնք ֆօլիֆիօն ընելու սովորութիւնը չունին, հաճին մեզ հասցնել այդ փնտռուած թիւը, որուն փոխարէն կը խոստանանք ԿՐԿԻՆ թիւեր տալ նորերէն:

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Խօսելէ առաջ պէտք է մտածել, ըսած են իմաստասէր փիլիսոփայներ, առանց աւելցնելու թէ՛ գրելէ առաջ ալ մտածման պէտքը անհրաժեշտ է:

Թերեւս շատ քիչեր ուշադրութիւն ըրած ըլլան իմ մասին, և դարմանան թէ ինչու ատենէ մը ի վեր չեմ երեւիր սիրած բեմին՝ Հանրագիտակի մէջ: Պատճառը իր պարզութեանը մէջ քիչ մը տղայական է կարելի է ըսել:

Մարդիկ կան՝ որոնք երբ պզտիկ պէպէ մը սիրելու ըլլան, այնքան ամուր կը սեղմեն և այնքան եռանդ և ոյժ կը դնեն իրենց սըրտանց համբոյրներուն մէջ, որ՝ տղան լացնելու աստիճանին կը տանին, կը ցաւցնեն:

Ահա նոյն բանը պատահած է ինձ, երբ չարաթներ առաջ անկեղծ գրուածքով մը գովանանքը կընէի այս թերթին և անոր մը նայուն աշխատակիցներուն համար, և անոնց մէջէն զատելով մէկքանիներ՝ որոնց գըրուածքները — կրկին կըսեմ — այնքան հաճոյքով կը կարդացուն գուարթասէրներու կողմէ:

Անաթէմա՛ . . . :

Անէծքի այս սարսաղազեցիկ բառը շատ թեթեւ պիտի ինար այն շարք մը խօսք-նետերուն մօտ, զորս սկսան տեղալ հասցէիս, գրով կամ բերանացի դիտողութիւններ, որոնց մէջ ե՛ւր հրաբորբոք դուրս կուգար, արժանապատուութեան՝ այն մեծ չեմ գիտեր ինչը, որ հուր ու բոց կտրած՝ խեղդել, լափել կուզէր գիտ:

Եւ որովհետեւ ըսենք, անպատասպար պարզ օրիորդի մը հետ էր գործերնին, գիտէ՛ք ինչ ըրին. իմ այս քմահաճոյքիս զոհեցին թերթին Տնօրէնը՝ և խմբագրութիւնը, զրկելով իրենց սովորական գրութիւններէն, քաջուեցան պարզապէս քնն ըրին, մանկապարտեզի կուկոններուն պէս, որոնք երբ վշտանան կամ աւաճանին չընեն՝ տուտալ կը չինեն, գոգնոցնուն վրայ կը նային, և նոյն խկ իրենց սիւրբական շօքօլան գետին կը նետէն . . . :

Բայց պէտք է գիտնալ որ հրապարակագիրներ կամ վարժ գրիչներ, պէտք է այսպէս ըլլան: Այսօր Հիւկօներ, Զօլաներ, Շէյքսպիրներ և ուրիշ ականաւոր դէմքեր և գրիչներ քննադատուած են, բոլոր բոլոր կողմէն և իրենց գործերը, երկասիրութիւնները ամբողջ, բայց իբրեւ կատարեալ և գիտակից իրենց կարողութեան, առ ոչինչ գրելով եղած դիտողութիւնները, չարունակած են աշխատիլ և արտադրել, աւելի լաւին և կատարեալին ձգտումով:

Վերջին գրութեանս մէջ, երբ շարած էի Ալփիարը, Թօլայեանը և Լիլան, կարծեմ թէ մահացու մեղք մը չէր գործածս, ոչ ալ նախատինք մը ընել ուզած էի. ո՛չ, բնաւ երբէք, այլ ընդհակառակը զանոնք զատելովս մասնաւոր ընել ուզած էի իրենց անխոնջ աշխատութիւնը գրական այս գուարթ ճիւղէն, և կարծեմ թէ չեմ սխալիր երբ կրկնեմ թէ միւս բոլոր գուարթ գրիչները ատենց քառորդին չափ բան արտադրած չեն: Մենք միշտ զանոնք կարդալու վարժուած ենք, և ասոնք են որ կը զարդարեն միշտ մեր պարբերականները իրենց մասնաւոր ճիւղին մէջ, և թէ միւսները ատեն ատեն, ըստ հաճոյս երեւցած են, և ոմանք ալ տարիէ մը ի վեր:

Արդ՝ ինչպէս կը տեսնաք, գործին մէջ մասնաւոր խտրութիւն մը կամ չարակամութիւն մը չըլլալէ զատ, անկեղծութիւնը և ճշմարտութիւնը խօսելու առաւելութիւնը կայ:

Սակայն ինչո՞ւ կը յոգնինք, մեր գրական, կրթական և եկեղեցական գործերուն մէջ չեն վխտար նմանօրինակ տղայամտութիւններ:

Անոնք՝ որոնք իրենց ընձեռնած գործին կատարեալ գիտակցութիւնը չունին, անոնք՝ որոնք տկար կը զգան ինքզինքնին իրենց յանձնուած մէկ պաշտօնին մէջ — ինչպէս կըսէ ռոմիկը — մահաւաճալի կը նային ո՛ր եւ է չիւղ մը, մազ մը գտնելու և այդ ինչդիր ընելով քաջուելու գործ է:

Այսպիսիները պիտի համարձակիմ կոչել՝

տղայամիտներ, թուլամորթներ, որ կամք չունին, ոյժ չունին, պաշար չունին:

Շատ երիտասարդ տարիքիս մէջ իսկ՝ կը փափաքէի, կուգէի որ քննադատէին զիս, դիտողութիւններ ընէին և մատնանշէին այն բոլոր ծուռ և ուղղելի սխալներս, որոնց կը հանդիպէին, նոյն բանը նաեւ ուսուցչութեան ասպարէզիս մէջ: Վարժարանին մէջ Տնօրէնին կամ Տեսուչին արդար մէկ դիտողութիւնը, շփացուցիչ և չլացուցիչ գովասանքէ մը վեր, անկէ աւելի ներգործիչ կը գտնէի, և ընտելէի առնուէր, և այն օրը երբ ո՛ր եւ է դիտողութիւն մը ըլլար ինձ, այն օրը շատ բան չահած կը համարէի կս զիս և գոհունակութիւնս չափ ու սահման չէր ունենար:

Բայց մի եւ նոյն զգացումը, մի եւ նոյն մտածումը ամէն խմորի համար չէ եղեր, փորձով հաստատեցի հիմայ:

Պէտք է եղեր փառաբանել, շոյել ու նոյն իսկ Աստուածացնել ամէն անոնք՝ որոնք եղած ըլլալէ հետո՝ ըլլալիքներ են:

Դիտողութիւնները իրաւ թէ կծու հանգամանք մը ունին, իրաւ է թէ անոնք աւելի խոցելու սահմանուած են, բայց իրականութեան մէջ չինիչ միտորոններ ըլլալին ստուգուած ճշմարտութիւն մըն է այսօր:

Առնուի՛լ, քէն ընել, քաշուի՛լ, ահա տկարութիւնը, մանաւանդ այր մարդուն համար, անոր համար, որ առնական կորով, ոյժ և առողջ դատողութիւն ունի:

Մենք կիներս, աւելի զգայուն, աւելի տկար էակներ, կը տեսնեմ թէ, մեր մէջ կամքը շատ աւելի զօրաւոր է քան անոնց մէջ՝ որոնք մեր հակառակ սեռը կը ներկայացնեն:

Արդ, գառնալով մեր բուն նիւթին, չեմ գիտեր հարկ կա՞յ ներողութիւն խնդրելու ամէն անոնցմէ, որոնք, յօգուածէս առնուելով՝ քաշուած են գրական հրապարակէն: Հաւատացէ՛ք, եթէ գիտնայի թէ գրութիւնս այդքան մեծ ազդեցութիւն պիտի ընէր և վըշտացնէր իմ գրչի աղբարիկներս, աւելորդ է ըսել թէ՛ ինչպէս վարժուի՛ն անունէն, նոյնպէս և յօգուածագրութենէ ալ պիտի քաշուէի, տեղ տալով իրենց քմահաճոյքին, որով կարելի է անուն մը չինէին ապագային:

Չեմ գիտեր, բայց, այնպէս կը մտածեմ

թէ՛ հինէն մինչեւ այսօր արդարացի դիտողութիւնները միշտ օգտակար եղած են, ինչ ձեւի տակ ալ ըլլան անոնք, և պէտք է տաքօրէն վերաբերուիլ և հետեւիլ այդ կարգի remarquesներուն, որոնց կոչումը, նպատակը չինիչ է և ոչ քանդիչ:

Ազնիւ խմբագրապետ,

Գրութիւնս աւարտելու մօտ՝ աւելորդ չեմ համարիր երկտողի մը հրատարակութիւնը խնդրել Ձեր սուղ էջերուն մէջ, ի պատասխանի Բաց-գոց նամակին, զոր ստորագրած էր ձեր սրամիտ աշխատակիցը՝ Ներշապուհ:

Բաւերը երբեմն երկդիմի իմաստներ կուսնենան Ազնիւ Պարոն, և կարծեմ կընդունիք այս ճշմարտութիւնը:

Գրութեանս մէջ վիժած բառէն առնուեր էք, ինչպէս ձեր միւս ընկերները, հոգ չէ, չեմ զարմանար, բայց պէտք է ըսեմ որ նոյն այդ բառը իր բուն իմաստովը գործածել ուղած չեմ, ոչ ալ գիտեմ անոր ֆիզիքական մանրամասնութիւնները, զորս յիշելու յանգըգնութիւնը ունեցեր էիք ձեր բաց-գոցին մէջ: Վիժածը, որչափ գիտեմ, և գիտեն ինձմէ շատ աւելի բարձր հմտութիւն ունեցողներ, իր պարզ իմաստին մէջ, ԹԵՐԻ ըսել է, ոչ ամբողջացած, ոչ կատարեալ և կարծեմ թէ բժշկութեան մէջ ալ այդպէս է: Անկատար աղաբերք մը վիժում կ'անուանուի, այսինքն թերի, չամբողջացած:

Արդ, այսքան բացորոշ բացատրութենէ ետք, կարծեմ թէ չպիտի ուղէք յամաւիլ և չընդունիլ մեր ըսածը, կամ մեր տածած գաղափարը, ինչպէս ուրիշներ, թէիւ յարմարութիւն ունիք երգիծական կամ դաւեչտական ճիւղերուն մէջ՝ բայց չէք, այլ . . . ՊԻՏԻ ԸԼԼԱՔ:

2 u 2 u

Հին ԴԵՄՔԵՐՈՒ եկեղեցական ու աշխարհականներու ծանօթանալու համար կարգացէ՛ք Յ. Դ. Մ. Ի Ստուբի հիմ դեմքերը նոր հրատարակուած հատորը: Իւրաքանչիւր սողը ինքնին հետաքրքրալարժ. գիրքը իբր յաւելուած կը պարունակէ Արմատի Հրեցակները վերնագրով արձակ բանաստեղծութիւն մը, որ մինակը կ'արժէ ահագին հատոր մը: Գինն է 5 դրշ. ամէն տեղի համար: Դիմել՝ Զ. Պէրպերեան տպարանը:

ՄԵՌԵԼՆԵՐՈՒՆ ՍԱԿԱԳԻՆԸ

Յօդուածս այս (գրաբառ) ձօնուած է այն թերթին Տէր-Տնօրէնին՝ որ Մանգոլմէին առաւօտեան, Արեւելքին՝ կէս օրը երկու ժամ 47 1/2 վայրկեան անցած անդրկամրջեան թերթ կ'ըսէ, իսկ պարբերականներու անունները բնաւ չը յիշեր, և միայն բացառաբար բովանդակութիւնը կը դնէ իրր ռեկլամ այն շաբաթաթերթին՝ որուն մէջ պատկեր ունի և թերթին անուան շուրջ մէկ քանի տող շոգորդութիւն:

Ահա այդ թերթին մէկ խմբագրականը տուն կուտայ ինձ զաւելչտական ճկուն վըրձինով մը պատկերել, անիմանալի և տեսական մէջ անքիբա մեռելակա՛ն սակարկութիւն մը՝ որ կարծեմ թէ իր իսկութեան մէջ պիտի կրնայ զուարթօրէն դաս մը տալ ամէն անոնց՝ որոնք «ոլջոյն» կ'ըսեն համեստօրէն և քրտակնիդ կը թալլեն անգթօրէն:

Այսչափ մը hors d'oeuvre բաւ համարելով՝ անցնինք բուն նիւթին:

Ինչպէս ամէն օրէնք իր բացառութիւնը՝ նոյնպէս ալ ամէն տուն իր պաշտ պէլասին կուենայ անպատճառ:

Չկայ տուն մը՝ որուն մէկ անկիւնը պառաւ ճառը մը, կամ ենթիքի ծերուկ մը՝ տոտոռոզուած չըլլայ: Ասոնք կամ կնոջ թէյզէն կըլլան և կամ ամուսնոյն մօրեղբայրը, և կամ ... ուղածնիդ կրնաք յիշել, երբ այս տողերը կարդացած ատեննիդ սենեկին պուճախը դարձնէք ձեր ֆիլսֆիկոզ աչքերը:

Ահա այդ տեսակ պաշտ պէլասի մը սեւ հոգին յանձնելու ... բարեբաղդութիւնը ունեցած էր Յակոբ աղա, յանձին իր անէր պապային, որ քսան տարիէ ի վեր կը խնամէր ի պատիւ տիկնոջը և ի յարգանս կենցաղագիտութեան:

Յակոբ աղային անէր պապան է մեռէր ... լուրը որչափ կը տարածայնուէր, խնդիրը՝ որ թարգմանի քանքանա, այնքան թափ կառնէր և մինչեւ իսկ այն քահանաները՝ որոնք անհրաժեշտ գնումներու պէտք ունէին Յակոբ աղային ննջեցեալէն վերջը ... ըսելով՝ կանոնէին, սպասելով իւղոտ պատառին:

Եւ վերջապէս սպասուած և որոշուած օր մըն ալ մեծաւ հանդիսաւորութեամբ Յակոբ աղային անէր պապան տարին յանձնել անյագ հոգին:

Չորս հինգ օր վերջ, կիրակի՝ կէս օրին, երբ Յակոբ աղա կերած խուզի ֆուռուցին մարսելու համար բանթալօնին և ժիլէին կոճակները դակած նետուած էր քանաբէին վրայ: Դուռը զարնուելուն, Տիկին Լուսիկ կուգայ իմացնել թէ՝ տաներեց քահանան է եկողը:

— Տան երեցն է Յակոբ աղա, ի՞նչ կըսես ...

— Ո՛ւֆ ... ճանըմ ի՞նչ է, ի՞նչ կայ, տահա չի լմնցա՛ւ պէ՛ ...

— Սուս ճանըմ, վէրտիվէնին գլոխն է...

— Ինչին գլոխը ըլլայ նէ ըլլայ, ի՞նչ տէրի էկեր է ... ըսելուն չի մնար՝ տէր պապան խանկալ խուճկալ ներս կը մտնայ:

— Բզջո՛յն ...

— Օրհնեցէք Տէր հայր, աֆ կընես տեղէս չերերալուս, քիչ մը խուզին շատ փախա՛ւ տէ ...

— Աստուած օրհնէ, հոգ չէ ճանըմ, մենք օտո՛ր ենք ... ըսելով կը նստի, մինչ պատրաստ սիկառը շէ՛ր, կը հրամցուի:

— Խեր ըլլայ Տէր պապա, ինծի կուգա՞յ քի հաշիւին թուղթը բերեր ես ...

— Շիտակը կուղէք նէ, չպիտի բերէյի, բայց Տիկինը զիս եկեղեցին տեսաւ, բեր ըսաւ, ես ալ համարձակեցայ ...

— Էյ ի՞նչ ըսել է, բան մը քի պիտի տանք, այսօր վազը, պարէ դուն աղուոր մը չափեցիր ձեւեցի՛ր ...

— Դուք հոգեբնիդ մընէք Յակոբ աղա, գործին մէջը ես կամ ... կըսէ ու ձեռքը գրպանը խոթելով թուղթեր մը դուրս կը քաշէ: — Ձեր Ագնուութեան փափաքին համաձայն, ինչպէս տեսաք, ամէն բան կարգով կանոնով եղաւ ...

— Կարդայ նայիմ, ի՞նչ ծաղք և ինչ սօժա կուղեն կոր ...

— Մումագին ... 500 դրուչ ...

— Հէ՛ ... 500 մի՛ ... Տէր հայր, դուն ալ տունի տէր ես, հինգ հարուր զրուշի մո՛ւր զիտե՛ս քանի սնտուկ կընէ նէ ...

— Այո՛, օրհնած, բայց տատիճանին համեմատ նշանակուած է ...

— Ճանըմ, վառուած մոմերուն քէնարներէն վազել պիլէ չի պաշլայեց, քանի՞ սահաթ վառուեցաւ, հէ՛մ ալ տահա մեռելը դուրս չելած հէրիֆին մէկը բուֆ բուֆ կը մարեր կոր ...

— Սովորութիւն է աղա, 500 կառնեն... Դագադին շուրջը մոմ ...

— Ա՛տ ինչ է Տէրտէր ... ատ մոմը պաշխա՛ ֆապոիքայէ է ...

— Ո՛չ, սակայն մեռելին քովի մոմերուն զատ սակագին կառնեն, բայց ես ջնջել տուի, և վերի հինգ հարուրին մէջ խայնամիչ եղաւ ... Թորե՛ 300⁷ զրշ ...

— Ի՛նչ կըսես կոր Տէր պապա, ա՛տ ինչ է ...

— Վեց հատ բորե քի, դագադին շուրջը վառուած մոմերն են ...

— Էյ պապամ, ատ մէյմը վերը հիսապի դրիր, ասո՛նք ի՛նչ խառախատա են եղէր... պալմոմիճի խանոթ կը բանանք կոր ի՛նչ է ...

— Ծածկոց ... 500 զրշ ...

— Հէ՛ ...

— Էօրթիւ, խատիֆէ, վրան արծաթիւ էօրթիւ քի ամէնուն չելար Յակոբ աղա ...

— Պէ ճանըմ ի՛նչ կը բանինք կոր, բարան գետնէ՛ն կը ժողվենք կոր ...

— Ծանր մեռելներու յատուկ է աղաս, ձեզի չի հանենք որո՛ւ հանենք ...

— Աս պաշ պէլասի անէրոջս համար ատ հանեցիք, էչխաղա՛, ես բան մը ըլլալու ըլլամ նէ ...

— Աստուած չընէ օրհնած, ատ ի՛նչ խօսք է, իրաւ քի հրամանքդ չես ննջեցեալը, բայց աս օրուան օրս Յակոբ աղայի մը անէր աղան էր ...

— Նէ իսէ, տահա՛ ...

— Զգես դագադակրաց ... 500 զրշ ...

— Ատ ի՛նչ թիւուիւ մասրաֆ է քի չեմ հասկնար կոր ...

— Դագադը կրողներու յատուկ հագուստ

տի վարձք, որուն մէջն է նաեւ փօրուար և շապիկ ...

— Կայնէ նայինք, ո՛ր մեռելը չպախ կը վերցունեն, սա ըսէ ինծի Տէր հայր, ալթըխ խաղըխին ծարը քիթէս կելլայ կոր, հիչ էօմըիւս մէջը մեռել մը չեմ տեսէր քի չպախ մարդիկ վերցունեն, այս լաթի քիլա՛ն ինչ է ...

— Օրէնք է աղաս, ի՛նչ ըսենք, այսպէս սահմաներ են ...

— Ատ սահմանողներուն ինէ բարեւ ըրէ, հարցո՛ւր քի, 500 զրշ ը սանկ ալուճնին առած տէ թաթած ունին ...

— Ի՛նչ ըսենք օրհնած, կանոն է եղէր նէ տրուի պիտի ...

— Սանքի չի տրուելու ըլլայ նէ՛ ...

— Տէր ողորմեա՛յ, ատ խօսքը ձեզի համար է ...

— Վա՛խ Յակոբ վա՛խ, սայքի սէնին էօլիւնիւ գալարըրջօրլար, է՛յ ...

— Մեռելակառք ... 540 զրշ. օրհնած :

— Համմէ՛ ...

— Մեռելի առապար քիրա, հինգ ոսկի ...

— Տէր պապա, ծախու չեմ առներ կոր, կէս սահաթուան քիրա է տալիքս ...

— Այո՛, բայց կանոն է աղաս, ոսկեզոծ եալ կառքն էր որ դրինք ...

— Ֆարադա ոսկեզոծ չըլլար տէ սեւ քիւլթիւկ ըլլար, մէյ մը հինգ ոսկին ծառքդ ոտ, մէկալ ծառքդ ալ սահաթդ պոնէ, կէս սահաթ վրան նայէ, նայինք սիրտդ կըլլա՛յ լոր տէյի հանել տալու ...

— Զահալառութիւն ... նոյնպէս 5 ոսկի ...

— Պէ պապամ եաղըշ չըլլայ, վերը մէյ մը վառեցինք, 500 տուինք ...

— Աս մէջտեղի ջահերուն գինն է, վերինը մոմագին էր օրհնած ...

— Ատ ջահ ըսածդ հալմա՛ կազի է ... անոնք ալ մոմերու փարայ չեն ...

— Այո՛, բայց անոնց մէջ ձեթ ալ կայ, ինչպէս նաեւ մոմ ...

— Ծօ չըլարըրաճաղըմ, ատ ատանկ մըսէր տէր պապա, սանկ լեռը ելլանք տէ մորէ մերկ հանուէ ըսէ ...

— Զէ օրհնած չէ, մի տրթողիր ամա՛, տէթը օրէնքը աս է ...

— Նուէր տեսնել աղիւսաց ... 120 զրշ .
 — Ի՞նչ ... ածապ եղաւ ինչ կը հասկնամ
 կոր, նուէր ըսածդ հէտիկէ ըսել չէ ...
 — Այո՛, ինքնաբուղիս վճարում մը օրհ-
 նած ...
 — Էյ պու գըղը չէյ... տէրտէր, նուէ-
 րը, ողորմութիւնը բազարը կը լլաւ ... ինչ
 ուզեմ նէ ան կուտամ, ատ ո՞վ սահմաներ է...
 — Ի՞նչ գիտնամ, հաշիւը այդպէս կար-
 գադրեր են ... կըսէ տէրտէրը քրտինքները
 սրբելով հոտած թաշկինակով մը, նէվաղիլէն
 թափ թաց ...
 — Ատ կարգադրողներուն երթամ տէ-
 քառսուն փարայ ուզեմ նէ կը հանեն կուտան
 ածապ ...
 — Չեմ գիտեր, բայց սակագինին մէջ,
 120 նշանակած է ... Ուրիշ ծաղք մըն ալ
 գերեզմանասան պայծառութեան ... 120 զրշ .
 — Տէր պապա երկան ըրիր, չօճօս չէ
 զիմացինը ... ո՞ր թաղին գերեզմանատու-
 նը հալա կաղիներով կը լուսաւորեն ...
 — Իրաւ թէ չեն լուսաւորեր, բայց այդ-
 անուամբ դրամ մը յատկացուած է ...
 — Ո՞ր մեռելին գլխուն վրայ լամպա՞ կը
 վառի քի ... էյլէնմիշ կըլաք կոր ...
 — Բաւ լիցի օրհնած, այսպէս սահման-
 ուած է ...
 — Անոնք ուղածնուն խըտար թող սահ-
 մանեն, տուողները նախնք ինչ պիտի սահ-
 մանէն, սամանէն ինչ խապար տէրտէր ...
 սամանէն ...
 — Հոգեհան համար 120 զրշ .
 — Ինծի նայէ Տէր պապա, հրամանքդ
 ցերեկները մէկ երկու հատ կը նետես ...
 — Մեղայ է Տէր Յիսուս Բրիստոս, բե-
 րանս չեմ դնէր ...
 — Չէ սանքի կը նետես կը բռնես կոր տէ-
 ատոր համար կըսեմ կոր ... ատ հոգեատուն
 ըսածդ ի՞նչ է ...
 — Իչտէ մեռելը գիշեր մը հոն մնաց նէ
 ատոր համար է ...
 — Իմ տունս պօշ օտա չունէր քի, ա-
 ուիք տաղըրա տաղըր վաղցուցիք տէ հիմա
 ալ տասուներկու սահաթին 120 զրշ . քիբա
 կուզէք կոր ... Աստուծոյ տաճարը օթէ՛լ է ...
 — Հախ ունիս օրհնած, հախ ունիս ա-
 ղա, ի՞նչ օգուտ, բան մը քի սահմաներ են ...

— Ասոր թաղականութիւն չեն ըսեր,
 մարդ սոյմիշ ընել կըսեն Տէրտէր, աս ըլա-
 լիք բան չէ ...
 — Նուէր Ս. Եկեղեցւոյ ... , քաղ, գե-
 րեզմանափոր և արձանագրութիւն, ասոնց ալ
 ինչ ուզես նէ ան տուր, ըստ հաճոյս են,
 մասնաւոր գին որոշուած չէ ...
 — Ա.Ֆ կընես Տէր հայր, հեռու կարգէդ,
 ալթիւ խալթ կընես կոր ... աստար փարան
 տալու է եղէր տէ ... տահա՞, տահա պախ-
 չիշն ալ ճապա ... հա՞ ...
 — Դեռ Դպրաց դաս մ'ալ կայ, անոնց
 ալ ձեր կամաւոր նուէրը մի մոռնաք ...
 — Ատոնք ի՞նչ են եղեր քի ...
 — Դպիրներու երգեցողութեան համար է
 օրհնած ...
 — Աղէկ եա, էկէր հալը վախթը տեղը
 մէկը չըլլայ մեռնողը նէ՞ սուր սուս պիտի
 վերցունեն հա՞ ...
 — Իրաւունք ունիք, բայց այդպէս սահ-
 մա ...
 — Հասկցայ տէրտէր, տա լախըսուն
 վերցուր, սընըրիս կը դպի կոր, հայ բարով
 խերով ճողէր այդ հէրիֆն ալ, ախպար մեր
 գեղին ժամը նէ՞ միւնքիւն քի ասանկ ծնիքի
 գաթիլը սըզտըրաքի ունենայ ... չէ՞ ... կէ-
 նէ մերը կէնէ մերը ... աս ձեր գեղին ժա-
 մը ինծի կուգայ քի պաշխա հասոյթ չունի
 տէ, մեռել եղածին պէս տարուան մը պիւտ-
 ճէն թէրազիլէմիշ կընէ կոր ...
 — Ի՞նչ գիտնամ օրհնած, ի՞նչ ըսեմ, ի-
 րաւունք ունիք, բայց եկու տես որ ասոնք
 անհրաժեշտ վճարումներ են, չափուած, ձեւ-
 ուած, որոնց համար ես ինքս անարժանարոր
 երաշխաւոր եղայ, ապա թէ ոչ տեսէք, ցու-
 ցակին տակը կանխիկ գրուած է ...
 — Վա՛յ, ըսել է քի քէֆալէթով կը թա-
 ղեն կոր մարդը հոս ... աչկ օլսուն, անանկ,
 է նէ, ոտքս տէնկ առնեմ, չիւնքիւ վաղը
 մէկանլօր ես ալ նալերս տնկելու ըլլամ նէ,
 մեռելս օռթան պիտի ձգեն, չիւնքիւ կընիկս
 լալէն պոռալէն ինսո՞ր խելք ընէ տէ քէֆիլ
 պիտի տայ, ես վաղուընէ թէղը չիգայ քէ-
 ֆիլ մը գտնամ ...
 — Աստուած երկար կեանք տայ Յակոբ
 աղա, այս ի՞նչ խօսք է ... կըսէ Տէր հայրը
 գրպանէն ուրիշ թուղթ մը հանելով :

— Ատ ի՞նչ է Տէր պապա, նորէն այր բէն գիմէն պիտի պաշլայինք ... կըսէ Յակոբ աղան կաս մարմիր կտրած :

— Չէ օրհնած, աս ալ յուղարկաւոր պաշտօնից ցուցակն է ...

— Յուցանի ցուցանի վրայ, փետտեցէք նայինք, ետլը է թալուխը ...

— Եպիսկոպոսին քի նախագահեց նէ, երկու ոսկի չիտանք ...

— Ի՞նչ կը բանիս կոր Տէր պապա, թաւլայէն չենք ժողուէր կոր ոսկիները ... երկու ոսկի ... ի ... ի ...

— Էյ ճանրմ հէմ նախագահեց հէմ ալ դամբանական խօսեցաւ, չի խօսէր նէ հայտէ մէկ ինկիլիզով գողցինք ...

— Պէ պապա՛մ, պէ կէօզի՛ւմ, իրեն ո՞վ ըսաւ քի ելիր հէրիֆը մէթ ըրէ տէյի ... ո՞վ է մեռնողը, ո՞վ էր քի ...

— Տէր ողորմեայ, խօսխօծաման աղնուաշուք Յակոբ աղայի մը անէր պապան էր ...

— Պէ Տէրտէր, հէրիֆը վախտին մը խալիճի էր, սօնը սօնը գործը ձգեց, եկաւ տունիս պուճախը նստեցաւ, ատոր ի՞նչը գովելու էր քի ...

— Այո՛, իրաւունք ունիք Յակոբ աղա, բայց յաջս հանդիսականաց պէտք էր որ անոր բարեմասնութիւնները թուէին ...

— Մարդ Աստուծոյ, էնֆիէին փարան քէսէէս կեկար, պազի ժամ կերթար նէ թապախին համար մէկ երկու խուռուշ մանտրուքը ես կուտայի քի, ան ալ չէր ձգէր տէ, պատէմ էլ զմէսի կառնէր չօճուի պէս կուտէր, ատոր ի՞նչ տէյի դամբանական ըսել տայի ... դուք զոռովէն մասրաֆ խաբուսի կը պանաք կոր ...

— Երկու վարդապետներուն մէկ մէկ ոսկի ...

— Ես քեզի բան մը ըսեմ, տա լիստային մէջը իմ անունս ալ գիր տէ քանի մը փարայ ալ ես սէպէպէնմիշ ըլլամ ... Պէ ախպար մէյմէկ ոսկին ի՞նչ է ...

— Սովորութիւն է որ եպիսկոպոս ըլլայ նէ, վարդապետները մէկ մէկ ոսկի կառնէն :

— Խապահաթը իմա է, ես պօշ գտնուեցայ, ինքիլինքը դարկաւ տէյի անուն հանելու էի քի, մէկ խարիպ տէրտէրի մը ծառքը ճերմակ մը տայի տանէր թաղէր ...

— Տասը քաննայ, երկերկու ճերմակ ... կըսէ Տէր պապան, աչքերը խոշոր խոշոր բացած :

— Ատոնք ո՞վ տալէթ ըրաւ ... տասը հատը ի՞նչ էր քի սըռըս սըռըս եկան շարուեցան ...

— Գէշ մըսէր Յակոբ աղա, անոնք ալ ուրիշ եկամուտ չունին իշտէ ...

— Հարըս մեռաւ նէ ինծի վասիէթ չըրաւ քի տէրտէրները դուն պիտի հոգաս տէյի, հէմ ի՞նչ տեղը կար քի տասը հատ բերէի ... ելլալիք տեղը սէզիկ առին նէ վաղեցին շարուեցան, հէմ ալ տանկլոխ՝ երկերկու մէծիտիէ ... օ՛խ պապամ ... քօբար պահճէպան գօբար ...

— Ժամարարի նուէր ...

— Ա՛տ ուրկէ եկաւ, իշտէ վերը քահանաներուն ըսիր ես ...

— Աս ալ ժամարարն է քի, ատէթ է զատ բան մը կառնէ ...

— Չըսես քի սօյղունճիներուն ձեռքը ինկեր եմ տէյի ... Տէր հայր, ասիկա տիւղճէ սօյղուն տալ է քի լեռը կըլլայ, պաշխա տեղ խեղքս չի հասնիր, մէյ մըն ալ աս գեղին ժամը կը տեսնամ կոր ...

— Ի տանէ փոխադրող ֆահանային ...

— Հէ՛ ...

— Տունէն ժամ մեռելը փոխադրող քահանային նուէր ...

— Ախպա՛ր, վերը երկու տեղ քահանայի հիսապ հանեցիր, աս ալ իւշիւնճիւն է ...

— Այո՛, ասիկա փոխադրութեան զատ նուէր մը կառնէ Յակոբ աղա ...

— Առապային վարուը խօճա կէօշ առապասին ծովը կանցունէ կոր 20 զրուշի ... աս տէրտէրը երկու ատըմ մեռելին առջեւէն գացեր է տէյի նորէն փարայ ...

— Սահման է Յակոբ աղա ...

— Ես ատ սամանէն ալ վաղ անցայ առապայէն ալ, հայտէ նայիմ ճէմ ըրէ, զէրէ առնունքս խաֆաս կեկայ կոր ...

— Բան մըն ալ պիտի ըսեմ ամա, խըռս չպիտի ելլաւ ... Մաքրալոց ֆահանայի ...

— Մօ՛ ա՛տ ինչ է, իլաթա՛ր կապեր էք ի՞նչ է, չեմ հասկնար կոր, թիս կրօնքլու քահանաներ ալ ունինք ...

— Հինուց ի վեր այսպէս յորջորջուած են, և մասնաւոր վճարում մը կըլլայ իրենց...

— Էօֆ ... Բիւֆ ... աման, կեցիւր պուտ մը ջուր տունեմ բերանս, գէրէ գէշու-թիւն կիմանամ կոր ալթըխ, չափը անցաւ, աս էկինցիին սէնէթին ֆայիպին հիքեայէն ալ աթլամիշ ըրաւ Տէր պապա...

— Դպիրք...

— Ինքնիրենդ կարդայ ալթըխ, նէ խա-ֆայիս մէջը խելք մնաց, նէ ալ քէսէս փա-րա...

— Ասոնք ալ երգողներն են, մեռելին ծայնաւորները...

— Տասը հատ տէքտէրին եալապուխ ծա-նը չէր օգտէր կոր տէ, մայէթինտէ ալ սիւ-րիւ մը պօշ կէզն Նէրիֆներ պուացուցիք քի ճաֆճաֆը ըլլայ, Յակոբին քէսէն ջուրը քաշէ տէյի հա...

— Յակոբ աղա մի բարկանար, աս տը-ղաքը գեղեցիկ երգողներ են...

— Չըռչըռ չէի՝ քի, ըռախիի չենք եր-թար կոր, աղուոր չիրքին աղօթք մըն է պիտի ըլլայ, աղուոր ծանլըն ինչ է... պօշ լախըռաը, ֆօթողիս հասկցուր...

— Լուսարար, ժամկոչ, քհնեա:

— Ասոնք նէ իսէ, ֆուխարէ մարդիկ են, աստար լիսթային մէջը հէլէ տեղին մաս-րաֆ մը հանեցիր, տուր ծառքդ քաշեմ...

— Լուսարարիք, քառսուշ զրուշ...

Յակոբ աղա տեղէն անանկ մը կը ցատկէ որ, քահանային վրայ կիյնայ:

— Հէ... քառսուշ զրուշ... Տէր հայր խելքիդ եկաւ... աս տեղը բաղնիք կեր-թանք կոր, քէսէ սապոն, բուֆլա տէօշէկ, նառիլէ, իլիմօնաթա, խախվէ, անկէ հո-քը, կէօպէկ թաշին սանկ կը փռուին, օս-կոռնին, պաճախին քաշել կուտան, մէկ սապօն մը, սապօն մը տահա, երեք չորս խաթ թէմիդ խալլու, դուրս ելլալնիքէն հա-զար շնորհակալութիւն... երկու չէյրէկի... աս լէշ մը լուացեր է տէյի քառսուշ զրուշ... եաղմա եօգ...

— Ինչ ընենք օրհնած, ասանկ սահմա-նուէր է...

— Տա սամանը վերցուր Տէրտէր, ախը-ռը մտնող էշ չիգայ հիմա... խելքդ գլո-խըդ ժողվէ...

— Շատ լաւ, գերեզմանափորին քսան զրուշ...

— Նէֆէս առ Տէրտէր, պօղադս բան մը կուգայ կը թխմուի կոր գէրէ... Պէ ճա-նըմ, ութը խուռուշի տէօնիւմ մը տեղ կը փորեն կոր, աս երկու արշընին նասըլ քը-սան զրուշ կուգէք... աստեղը բան մը կայ, չեմ կրնար կոր ըսէր ամա, սօնը սօնը բախլան պերնէս պիտի հանեմ, անանկ կե-րեւայ կոր...

— Թագաղակիրք և մոմակալք, կըսէ քա-հանան շարունակելով իր լիսթան:

— Պէ պապամ, մէյ մը գրածնիդ մէյ մը տահա կը խօթէք կոր...

— Ասոնք մոռթուծիններն են քի, հիշ տէյի իսէ վեց հատին վեց մէծիսիէ մը տա-լու է...

— Կայնէ նայինք մեր լուսահոգի Հէթում աղան քանի՞ օխայ էր քի վեց հոգիով վեր-ցուցիք... ան ըսէ...

— Իրաւ թէ այդքանի ծանր չէր, բայց օրէնքը վեց հոգի է...

— Ախպար, կէօմրիւկին համալները եր-կու հարուր օխա պալեան կառնեն հինգնոցի մը խաներուն քիրէմիարը կը հանեն կոր... զի՛ արար ըզմեզ...

— Երթելեկութիւն... աս ալ հոս հոն վազողներու համար է, Յակոբ աղա...

— Ինչ կար քի, կրա՞կ կար, ինչ կար քի վազվեցին...

— Չէ իշտէ, ասդին անդին գացող ե-կողները, կըլլա՞յ ես ասանկ օրի...

— Աչկ օլսուն լիսթա, ըլլայ նէ ալ ա-սանկը ըլլալու է քի պերնի համ տայ... վա՛յ էսնաֆին քի ձեր ծառքը կիյնայ...

— Արծաճագրութիւն...

— Ա՛ա ինչ է, ինչ խայտ ըրիք քի...

— Մեռնողին անունը, թուականը, քիւ-թիւկը անցնելու ծախս է Յակոբ աղա, շատ մի տեսնար...

— Ո՞րք քիչ է քի ասիկայ շատ չի տես-նամ. աս ալ սալաթային եաղը... Էօֆ... տըտեղէն պուտ մը ջուր տուր կընիկ...

— Գա ճանըմ Յակոբ աղա, որ սահաթ է ծանրը կառնեմ կոր ամա, պէլքի կողտուկ է տէյի չէի իգար կոր, կըսէ Տիկինը, որ իր

հորը ծախքերը ամուսնոյն վճարել տալուն համար սայլըյէն ներս չէր համարձակեր մըտնել ...

— Էյ բէք աղէկ Տէրտէր, ճէման ինչ կըլլայ կոր մասրափը, կըսէ Յակոբ աղան՝ ձեռքը դրպանը տանելով:

— Հի՛չ, գրեթէ ոչինչ աղաս, 3999 լըշ. եռեսուն փարայ ...

— Տասնոց մըն ալ տամ խախլէ մը խմէ տէ 4000ի թամամցուր ..., տեսա՛ր կընիկ, իլլէ գեղ երթանք գեղ երթանք կըսէի՛ր կոր, տեսա՛ր մի հիմա գեղին խաչը, խաչըլը ... մէկ մեռելը 4000 լըռւշ ...

— Վո՛ւյ մըսէր, հիմա խելքիս կուգայ Յակոբ աղա, առ ինչ երևում է ... խօսք կառնէ Տիկինը ձեռքերը երեսին տանելով:

— Ինձի նայէ եղածը եղած է, էկէր ես դուն ես ես, պզտիկ մը ըռահաթաղութին իմանանք նէ խօսք մէկով մեր գեղը երթանք, հոն մեռնինք, ղէրէ ինձի կուգայ քի, աս մարդիկը տիրի տիրի մեղ սոթթելնէն ետքը՝ մեռելնիս ալ օռթան պիտի ձըգեն ...

— Տէր ուղղեայ զճանապարհս ... ըսելով քահանան ոսկիները կը դրպանէ և փողոց կը նետուի ... իրիկունն ալ օղիին թէփփին գիրկը ...:

Ահա թէ ինչո՞ւ եկեղեցւոյ զանգակը միշտ կարճադանդէ՛

ՏԱ՛Ն ՏԱ՛Ն ՏԱ՛Ն:

ԼԻԼԱ

ԿՏՐՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆ (*)

ԱՌ ԷՆԺԵԱ

Պատ. Մանգուլէի թիւ 2071ին մէջ ստորագրած յօդուածիս, որուն օգտակարութիւնըն բանիւ և գրով յայտնուած է բարեկամաց կողմէ, իբր պատասխան էնժէա կեղծանուն բարեմիս մէկը գրած էր հակայօդուած մը, որուն, ըստ իմ սովորութեան չեմ ուղեր պատասխանել:

ՎԱՀԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ

(*) Խուսաբողական ասկէ աւելի նորաստեղծ գիւտ մը կարելի չէր մտածել:

ԷՆԺԵԱ

Էջիմէի մեր ժաջան եւ յարգելի գործակալը Մեծ. Դեորգ ԷՖ. Աբահամեան հետեւեալին հրատարակութիւնը կը խնդրէ խմբագրութեան:

ՀԵՏԱՔՐՔԻՐՆԵՐՈՒՆ

Անձնական զբաղումներու պատճառաւ հինգ տարիներէ ի վեր հիմնուած կրթական գործի մը յաջողութեան արգելք չը հանդիսանալու հեռատեսութեամբ՝ հրաժարած եմ Էջիմէի Ս. Թ. Եկեղեցւոյ Դպրաց Դասու Ատենապետութենէ, հինգ տարիներէ ի վեր պաշտօնավարելէ վերջ, մի եւ նոյն ժամանակ հրաժարելով Եկեղեցական գոյքապահ մարմնոյ անդամակցութենէն, որ երկու ամսէ ի վեր յղացուած գործ մ'էր այս տողերը ստորագրողին կողմէ:

Եւ նկատելով որ այլեւս անկարելի պիտի լինի մեզ շարունակել Դպրաց Դասուն՝ ըլլայ պատուակալ, ըլլայ գործոն անդամակցութիւնը, նոյնպէս հրաժարած եմ ի բոլորէ, տեղեկացնելով Նորին Դեր. Առաջնորդ Հօր:

Որով ամսոյս 18է սկսեալ ո եւ է առնչութիւն մը չունենալս և պատասխանատուութենէ զերծ մնալս հրապարակաւ կը յայտնեմ այն ամէն հետաքրքիրներուն՝ որոնց խօսք հասկցնելու համար անպատճառ դէպ ի անցեալը ակնարկ մը նետել նոյն կրթական գործին համար անհրաժեշտութենէ հետի չ'է:

Հետեւաբար մաղթելով յաջողութիւն մեր նպատակաւոր գործող Դպրաց Դասու ընկերբարեկամներու:

Մնամք յարգանոք

ԳԵՈՐԳ Մ. ԱՐԵՎԱՍԵԱՆ

Ա. Պոլիս, 25 Մարտ 1908

Ամերիկեան Աստուածաշունչի Ընկ. Արեւելքի Տնօրէնութեան գործակատար Գրիգոր ԷՖ. Շահպաղեանի որդին, Տիար Օննիկ Շահպաղեան, իբր երկու տարի առաջ Կլաոքոյէ մէջ յաջող քննութեամբ մը հետեւեալ մեքանիքի վկայական ստացաւ: Յետոյ ուրիշ քննութեամբ մը ստացաւ երրորդ կարգի հետեւեալ վկայական: Վերջերս ալ Կալիֆորնիայի մէջ յաջող քննութենէ մը անցնելով, ըստ Անգլ. Կառավարութեան օրինաց, իրաւունք և վկայական ստացաւ գործելու անգլ. ո եւ է նաեւ մը մէջ իբրեւ երկրորդ և միայն 200 ձիու ոյժ ունեցող նաւու մը մէջ եւս իբրեւ առաջին հետեւեալ:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները:

ՏԱՐՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԻՉՊԱՆՈՒԹԻՒՆ

Բժիշկ մը, փոքրիկ երկասիրութիւն մը գրեց՝ «Որատներ զեռատի մայրերուն» աւանդն, եւ իր ձեռագիրը տպարան մը դրկեց հրատարակութեան համար:

Այն միջոցին, ծաղկավաճառ մըն ալ, միեւնոյն տպարանին յանձնարարեց տըպագրութիւնը իր ծաղիկներու քարայօղին, ուր տմփոփուած էր՝ ծաղիկներ տնկելու ու խընամելու պէտք եղած տեղեկութիւնները:

Երկու գիրքերը — Բժիշկին ու ծաղկավաճառին — տպուեցան միեւնոյն աստիճանով, կազմուեցան աստիճանով, կազմարար պաշտօնեաները՝ տասնեակ մը էջեր իրար խառնեցին, որովհետեւ երկու գիրքերուն էջերն ալ միեւնոյն Ֆոնման ունէին:

Բժիշկը, առանց գիտնալու գրքին գույնը եկածը՝ հրապարակ հանեց: Գնողներէն մէկ քանին՝ հետեւեալը կարդացին 57երորդ էջին վարերը:

«Իեռասի ամուսնացեալներ, կուգէ՞ք գեղեցիկ զաւակներ ունենալ, լաւ կազմով եւ ամեն հիւանդութեան դեմ դիմելու կարող, պարսիք...»

Եւ էջը դարձնելով՝ ապշած կարդացին շարունակութիւնը:

... ցանել Մարսին, կանխահոգ աշխատութիւնները ընելէ եւ 0 մէքր 70ի վրայ 0 մ. 70 փոս մը բանալէ ետք: Այս կերպով գործադրուած, հունցր արգասաւոր պիտի ըլլայ, մանաւանդ եթէ ցանողը վարպետ է:

Միւս կողմէ, ծաղկավաճառին յաճախորդները՝ 56երորդ էջին վարը կարդացին.

«Առիւծաբերանը (աւլան աղօղ), բոյս մըն է եւ որուն մեակութիւնը շատ դիւրին է: Ապրիլին եւ Մայիսին կը սնկեն. բայց բարեկաւան ընելու համար պէտք է...»

Եւ էջը դարձնելով, 57երորդ էջին վերելին՝ կը կարդային շարունակութիւնը:

... անմիջապէս բերել պարտք ծծմայր մը՝ քիչ մը գէր եւ առողջ»:

Եւ ամէնէն տարօրինակը այն նամակն էր, որ բժիշկը կընդունէր.

«Պարոն Տօքթօր,

«Ձեր հրահանգին համաձայն՝ հողը փոքրեցի, հերկեցի, ջրեցի... գիւղացի մը պէտք. «Եւ այս յոգնութիւնս իր պտուղը տուաւ, «քանի որ սա ժամուս թօմպուլիկ մանչու մը «հայրն եմ...»:

ԴԵՂՋԱՆԻԿԸ

Անգլիացի մը ճաշարան մը կը մտնէ առթութիւնը հանդարտեցնելու համար:

Ճաշացուցակին կերակուրներէն մէկ քանին ճաշակելէ ետքը, իր մօտը դրուած վոնդակ մը կը տեսնէ՝ որուն մէջ դեղձանիկ մը կը գեղգեղէր:

Անգլիացին ճաշարանին սպասաւորը կանչելով՝

— Բանի՞ կը ծախէք սա՞ թռչնիկը:

— Բայց ծախու չէ՛. պատասխանեց ծանան.

— Շո՛ւտ ճաշարանապետը ինծի կանչէ. ճաշարանապետը եկաւ:

— Ձեզի կուզեմ հարցնել թէ՛ սա փոքրիկ թռչնիկը քանի՞ կը ծախէք ինծի:

— Ա՛հ, Միլօրտ, երեք հարիւր ֆրանք է,

— Շատ աղէ՛կ, քէպպա ըրէք զայն իսկոյն, կուզեմ ուտել անկէ...:

Մինչդեռ խոնարարը դեղձանիկը կը խռովէր, ճաշարանապետը ուրախութենէն կը ցատկոտէր, ասանկ փառաւոր ստակ մը չահելուն համար: Դեղձանիկը խռովուած, ճաշարանապետը առաւ ու թեթեւ քայլերով Անգլիացիին տարաւ՝ որ անհամբեր կսպասէր երբ պնակին մէջ դեղձանիկը տեսաւ:

— Ինծի օրկէ ֆրանքի մը կտրեցէ՛ք, ըսաւ պաղարիւնութեամբ:

Ճաշարանապետին դէմքը դիտել արժանի էր:

ԶՈՒԱՐԹ ՏԱՊԱՆԱՔԱՐ ՄԸ

Բարիզի գերեզմանատան մը մէջ

Հարբուխէ մը սասիկ, բժիշկն Սկրիպտը՝ Մեռա՛ւ ա՛յս գիշեր. եռուն տառու կար: Հեղինակեց նա գիրք մը օգտակար.

Անուցն է՝ «Արուեստ ապրելու երկար»...:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԷՏԻԿ-ԲԱՇԱ. — Վերջին պահուն կիմանանք թէ՛ Ամերիկեան վարժարանի ուսուցչուհիները պճնասիրութենէ աւելի արծաթասիրութենէ մղեալ թղթավաճառութեան սկըսած են ... անշուշտ Տնօրէնուհին չ... գիտութեամբ, գործ մը որ ասկէ առաջ Վ. Պ. Էն կընէր և որ հիմա քաջուած է, տեղի տալով Ֆեմինիզմին ...:

ԱՐՄԱՇ-ԽԱՍԿԱԼ. — Հանրագիտակի Ա. տաքազարի երբեմնի գործակալ՝ տիեզերահռչակ Տօքթ. Կարապետ Պուռմանան, անցեալ որ հոս հասաւ դարմանելու համար հիւանդ մը, որուն կոկորդին մէջ մէկ քանի ռակիներ կային, և լետոյքին վրայ նայելով՝ ետ դարձաւ, երբ հիւանդը պոռաց երեսին... «բժիշկ՝ բժշկեայ անձն քոյ...» (Մենք իւլիէնսքէի ալ փորձեցինք օգուտ չըրաւ. Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Օղերը տաքնալէն ի վեր կիներ և օրիորդներ փուտուայի դրամ տուած չունին, երբ թուալթի պէտք ունենան, փողոց կելլան և ձեփ ձերմակ կըլլան կոր ... փոշիէն:

ՆՈՅՆ. — Ստոյգ աղբիւրէ մեզ կը տեղեկացնեն թէ՛ հուշակաւոր Զիֆթիկի պարտէզը Պոմօնիէն բռնած լլալով՝ ասկէ վերջ հարիւր փարայով կարգ մը զիւպլէներ պիտի կրնան լիուլի նախա ընել:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Տեղացի պիւռուտօճի շէնքերէն կը խնդրուի որպէս զի փոխանակ սքեֆաի, գրիչ բռնել սովորին, և փոխանակ ժամը երեք զրուշ վրայ տալու, ժամը երեք զրուշ շահելուն ճամբան նային:

ԵՖԵՆ-ԳԱՐՈՒ. — Մառութները պոյ նետելէն ի վեր տեղացի օրիորդները և միւսիւններն ալ սկսած են ոտք նետել դէպի այդ կողմերը, տարեկան սիրային դասընթացքը վերսկսելու համար:

ԲԵՐԱ. — Եռաձայնի նորակազմելի դըպրաց դասին մաեսքոօն, իւսիւի ի բերան հոս հոն վազելով՝ մարդ-որսորդութիւն կընէ կոր: Անցեալ օր մէկուն ձայնը փորձած ատեն՝ այնքան պոռացուցեր է որ քովի տուններէն կրակ կարծելով՝ ջուր վազցուցեր են ...

Արսօմսքէ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՍՐԱՄԻՏ ԶԲՕՍԱՆԲ

ԹԻԻ 4

.
.
.
.
.

Կէտերուն տեղ տողեր գետեղելով կազմել հինգ բառեր, որոնք թէ՛ հորիզոնական և թէ՛ ուղղահիգ կերպով միանգամայն կտրւացուն, առանց յատուկ անուն գործածելու: Նիկոմիդիա Ա. Ս. 2.

Սոյն Սրամիտ Զբօսանքը մինչեւ երկու շաբաթ ճիշդ լուծողը, վիճակաւ պիտի ստանայ՝ Երկրագործական Պանքայի բօսքսին կէսը, տասերկու ամսուան համար, որ ինքնին Մէկ ՕՍՄ. ՈՍԿԻ արժէք մը ունի. փայլուն բաղդը միշտ ստացողին տրամադրելի:




ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՅՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասէսի բիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ չահած և գրաւած է վրտահութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները:

Հերեթիկ էֆ. Պոյաճեան այս անգամ Եւրոպայէն բերել տուած լլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կաղմարարներու արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:



ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ.


ՀԱՆՈՐԱԳԻՏԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
և տղայոց շիք և դիմացկուն փաթիւն-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—27



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանիկ
տակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջիկասանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՄԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասանման	» 12 Ֆր.	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՊԱՋԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր լին ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է ղրկուին կամ Ծամ. Մանտաբութով և կամ բութայի փութով 20 հաճը
20 ղրուշի հաշուով:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ
ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԷ-ՕՍՄԱՆԵՐԷՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պէրպէրեան վարժարանի բանիբուն տնօրէնը՝ Պետրոս Էֆ. Կարապետեան, իր շարք մը օգտաշատ հեղինակութիւններուն կը բերէ կցել իր ստուար գործը Հայերէնէ-Տաճկերէն բառգիրքը, հատոր մը՝ որ անհրաժեշտ է ամէն դպրոցականի և ամէն անոնց՝ որոնք Օսմ. գեղեցիկ լեզուն հիմնովին սովորել կը փափաքին:

Պետրոս Էֆ. Կարապետեան իբր առաջնակարգ ուսուցիչ Օսմաներէնի, լեզուին բոլոր նրբութիւններուն գիտակցաբար հեղինակած է այս ընտիր բառարանը և իր կողմէ ճոխ յաւելումներով՝ պիտանի հատոր մը շարձուցած է զայն:

ԳԻՆ 35 ՂՐՈՒՇ

Կեդրոնացեղին՝ ՊԱԼԵՆՑ գրասուն.

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Համօ-Բուլօ խան իր 2

Նախ փորձառունները, յետոյ խառնողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, գտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Քէշիշեան վաճառատունը թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ, Ֆիլիսօս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւֆոսներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՛ զինքն աժանութեան, տեսակի ազնուութեան և ապրանքի տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի է գտնել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔ

Արդի Հայերէնի լաւագոյն առաջնորդները

1. — Տարրական Քերականութիւն արդի Հայերէնի, նոր ոճով 2 դրուշ.
2. — Լրացուցիչ (Տարրական կարգերու տառական գիրք) 3 դրուշ.
3. — Նոր Քերականութիւն (գործնական եւ տեսական) 4 դրուշ.

Ամէն ուսուցիչ այս գիրքերով կրնայ դասաւոր. — ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՐԷՊ Է:

Դիմել՝ 47 Պապր-Ալի ճաշխի, որ կեդրոնատեղին է Դաւթեան հրատարակութիւններուն: